Ալեքսանդր Ծատուրյան

1897 թ.

Դարձյա՛լ Նոր-Տարի… Օ՜, թո՛ղ նորանոր
Վառվռո՜ւն հույսեր, գարնան երազներ
Մեր կյանքը, հայեր, հուզեն և՛ այսօր,
Նորի՛ց բորբոքեն մեր լքյալ սրտեր:

Ի՛նչ անենք, թե ցուրտ, մահաշունչ ձրմեռ
Պատել է այսօր հայրենի աշխարհ.
Թոշնե՜լ են վարդեր, մարե՜լ են աստղեր,
Մեր կյանքը չունի՜ պարզ երկնակամար:

Ի՜նչ անենք, թե մեզ փափագա՜ծ կյանքի
Դեռ չէ շողշողում սիրուն առավոտ.
Անարդար մատնված վշտի, տանջանքի.
Ապրում ենք անլույս, անջուր ու անօդ…

Տանջանքը, հայե՛ր, ծընում է և՛ հույս,
Հուսով ներշնչված ընկնո՜ւմ են զոհեր.
Թող տանջվինք… մո՜տ է և՛ մեր արշալույս,
Միայն թե հառա՛ջ, հառա՛ջ անվեհեր…